

# Շորորա, Սալատ / Shorora, Salat'

Միջակ

**Allegro non troppo**



Շո - րա - րա', Սա' - լատ, շո - րո - րա',  
Sho - ro - ra, Sa - lat', sho - ro - ra,



նա - վակն Ար - շա - կին կօ - րո - րա:  
na - vakn Ar - sha - kin ko - ro - ra.



Ար - շակն ե - կավ, ծո - վը գը - նաց,  
Ar - shakn ye - kav, tso - və gə - nats',



խեղճ Սա - լա - թին ցա - վեր մը - նաց.  
khekhch Sa - la - t'in ts'a - ver mə - nats':



խա - բար տա - րեք խեղճ Թա - մա - մին,  
kha - bar ta - rek' khekhch T'a - ma - min,



Աբ - րե - ի տուն ա - վեր մը - նաց:  
Ab - re - i tun a - ver mə - nats':



Շո - րո - րա', Սա' - լատ, շո - րո - րա',  
Sho - ro - ra, Sa - lat', sho - ro - ra,



նա - վակն Ար - շա - կին կօ - րո - րա:  
na - vakn Ar - sha - kin ko - ro - ra.

*Շորորա՛, Սա՛լատ, շորորա՛,  
Նավակն Արշակին կօրորա:*

1. Արշակն եկավ, ծովը գրնաց,  
Խեղճ Սալաթին ցավեր մընաց.  
Խաբար տարեք խեղճ Թամամին,  
Աբրեի տունն ավեր մընաց:

*Շորորա՛...*

2. Քամին ելավ երան երան,  
Նավը զարկավ ծովի բերան.  
Խաբար տարեք իմ մայրիկին,  
Մեր տունն ու տեղ մընաց վերան:

*Շորորա՛...*

3. Վերն նայեմ,– կապուտ ամպ ա,  
Ներքն նայեմ,– ջուր ու շամբ ա.  
Վերն Աստված աղաչեցի,  
Ներքն չեղավ ինձի ճամբա:

*Շորորա՛...*

4. Երկինք ամպեց, քամին առավ,  
Ծովի երես ջուրը սառավ.  
Թիակ զարկի, ինչ որ արի,  
Նավը տեղեն ետ չըդառավ:

*Շորորա՛...*

5. Ես Արշակն եմ Գուլաբեցի,  
Գիշեր, ցերեկ ծովին կացի.  
Խաբար տարեք իմ Սալաթին,  
Հընար չեղավ, նըստա լացի:

*Շորորա՛...*

6. Աստծուց եկավ, էս ի՞նչ բա՛ն ա,  
Ես էս ցավին չեմ դիմանա.  
Խաբար տարեք իմ Նիկոյին,  
Էս նեղ տեղից ինձի հանա:

*Շորորա՛...*

7. Բուք ու դուման ա ձորերըս,  
Սև ա դառել իմ օրերըս.  
Ափսո՛սս ինձ պես կըտրիճ տըղեն,  
Բողջին մընաց իմ շորերըս:

*Shorora, Salat', shorora,  
Navakn Arshakin korora.*

1. Arshakn yekav, tsovə gənat's',  
Khekhch Salat'in ts'aver mənats':  
Khabar tarek' khekhch T'amamin,  
Abrei tun aver mənats'.

*Shorora...*

2. K'amin yelav yeran yeran,  
Navə zarkav tsovi beran:  
Khabar tarek' im mayrikin,  
Mer tun u tegh mənats' veran.

*Shorora...*

3. Verev nayem,– kaput amp a,  
Nerk'ev nayem,– jur u shamb a:  
Verev Astvats aghach'ets'i,  
Nerk'ev ch'eghav indzi champ'a.

*Shorora...*

4. Yerkind' ampets', k'amin arrav,  
Tsovi yeres jurə sarrav:  
T'iak zarki, inch' vor ari,  
Navə teghen yet ch'ədarav.

*Shorora...*

5. Yes Arshakn em Gulabets'i,  
Gisher, ts'erek tsovin kats'i:  
Khabar tarek' im Salat'in,  
Hənar ch'eghav, nəsta lats'i.

*Shorora...*

6. Asttsuts' yekav, es inch' ban a,  
Yes es ts'avin ch'em dimana:  
Khabar tarek' im Nikoyin,  
Es negh teghits' indzi hana.

*Shorora...*

7. Buk' u duman a dzorerəs,  
Sev a darrel im orerəs:  
Ap'sos indz pes kətrich təghen,  
Bokhch'in mənats' im shorerəs.